

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

«Ռուսկիա Վեճոմոստ» թերթի առաջնօրդող յօդուածը
Հայկական հորցի մասին.

Խուսաց «Ռուսկիա Վեճոմոստ» լուրջ և տարածուած թերթն իւր 244-րդ համարում Խուսա-տաճկական պատերազմի առթիւ Հայկական հարցին նույիրում է հետևեալ կարևոր առաջնորդող յօդուածը.

Մոսկովա, 23 հոկտեմբերի.

Երրեակ համաձայնութեան պետութեանց զինուած պատերազմն ընդդէմ Աւստրօ-գերմանական դաշնակցութեան հէնց սկզբից ստացել է ազատարար պատերազմի բնաւորութիւն։ Եւ որչափ զարգացել են դէպքերը, նոյնչափ էլ նորա այդ բնաւորութիւնն երկան է եկել մեծ պարզութեամբ։ Եւրոպայի զանազան կողմերում—Սերբիայում, Բելգիայում, Պօզնանում և Լօթարինգիայում, Շլեզվիգում և Դադմատիայում, Տրանսիլվանիայում և Բոհեմիայում հակագերմանական դաշնակցութեան յաջողութեանց հետ կապակցում են և ազգերի յոյսերը ազատուելու օտարազգի և օտարացեղ կապանքներից։ Իսկ Տաճկաստանի միջամտութիւնը ներկայ պատերազմին էլ աւելի ուժեղացնում և մատնանշում է եւրոպական մեծ պատերազմի ազատարար նշանակութիւնը։ Այն ազգերի թուին, որոնց երրեակ համաձայնութեան պետութեանց յաղթութիւնը պէտք է քերի ազատութեան բարի համբաւը, միանում են քրիստոնեայ ժողովուրդները, որոնք մինչև այժմ դեռ մնացել են տաճկաց իշխանութեան ներքոյ, իսկ սրանց թւում ամենից առաջ այն ժողովուրդը, որը վերջին քառորդ դարուայ ընթացքում կրել է աւելի ծանր փորձութիւններ,

քան Մերձաւոր Արևելքի որ և է ժողովուրդ։ Մեր խօսքը հայերի մասին է։

Հայ ժողովրդի պատմական վիճակը շատ ընդհանուր առնչութիւն ունի Բալկանեան ազգութիւնների վիճակի հետ։ Այստեղ մեր առաջ նոյնպէս Ներկայանում է մի ազգ, որը եւրոպական արիական ցեղից է ծագումով և լեզուով, իւր կուլտուրայի հիմնական աղբիւրներով կապուած եւրոպական ժողովրդների հետ, վերջերում թուրք նուաճողների յարձակութիւներով կտրուած եւրոպայից, իսկ քրիստոնէութեան միջոցով և նորա շնորհիւ պահպանել է ազգային ինքնուրոյնաւթիւնը։ Կապը եւրոպական քաղաքակրթութեան հետ։ Որոշ անալոգիա Բալկանեան ազգութիւնների վերաբերեալ կարելի է բերել նաև հայերի Ռուսաստանի հետ ունեցած յարաբերութեանց պատմութեան մէջ։

Ռուսաստանի առաջին քաղաքական յարաբերութիւնները հայերի հետ սկսում են այն իսկ շրջանում, ինչ որ նորա յարաբերութիւնները Բալկանեան ազգութիւնների հետ և հենց նոյն ֆակտօրների ազդեցութեան ներքոյ Մի կողմից, հայերը պաշտպանութիւն փնտոելով ասիական նուաճողների ընդդէմ, բնականաբար իրենց հայեացքն են դարձնում դէպի Մասկուան, իսկ միւս կողմից ուռւսական պետութիւնը ձգտելով դէպի հարաւ-արևելք՝ ցանկանում է յենուել հայերի վրայ, ինչպէս բնական դաշնակիցներին Մեծն Պետրոսի միութիւնը հայ «մելիքների» հետ (ինքնավար իշխաններ) նոյնքան նշանակալից է նորա Դեկբենտեան արշաւանքի համար, ինչպէս նորա միութիւնը մոլուգաւեան տէրերի հետ Պրուտի արշաւանքի համար։ Բայց այդ առաջին երեսյթները՝ հայերի ձգտութենքը դէպի Ռուսաստան ոչ մի գործնական հետևանք առաջ չըերին։ Միայն յետագայ դարում համաձայն Գիւլիստանի (1813 թ.) և Թիւրքմէնչայի (1828 թ.) դաշնապրութեանց պարսից տիրապետութեան ներքոյ գտնուած հայերի մեծ մասն անցան Ռուսաստանի իշխանութեան ներքոյ, և նրանց յարաբերութեամբ այդպիսով իրականացան Ալեքսանդր Ա. Ի.

հրովարտակի խօսքերը, «Քրիստոնէական նահանգները, որոնք դիմում են իմ պաշտպանութեան, չեն հետացուի այդ պաշտպանութիւնից»:

Պարսկաստանը պահպանել է իւր իշխանութեան ներքոյ միայն համեմատաբար հայերի աննշան մասը: Բայց տաճկակական Հայաստանը մնաց «Հազարուած» ոչ միայն անցեալ դարի առաջին կիսի ոուստաճկական պատերազմից յետոյ, այլ և 1877—1878 թ. պատերազմից յետոյ: Սան Ստեփանէի դաշնագրութեան համաձայն Բ. Դուռը պարտաւորում էր Հայաստանի մէջ մտցնել «բարենորոգութիւններ» և ապահովել հայերի անլուանդ կեանքը քրգերից և չերքեղներից, ըստ որում այդ պարտականութիւնները կատարելուց կախուած էր Տաճկաստանի հայկական նահանգները ոուս զօրքերով մաքրելու գործը: Բերլինի գաշնադրութիւնը, սկզբունքով պահպանելով այդ պարտաւորութիւնները, իբրև ապահովութիւն նըանց կատարման փոխարինեց ոուսական զրաւումն մեծ պետութիւնների հաւաքական վերահսկողութեան: Այդ փոփոխութիւնը հայերի վեճակի համար ունեցաւ ճակատազրական հետեանք: Պետութիւնների մէջ եղած թշնամական զրութիւնը ջատեց նրանց միասին վերահսկելու ամբողջ նշանակութիւնը, իսկ Տաճկաստանը յանձին Արգու-Համիդի ոչ միայն չկատարեց իրեն վրայ զրուած պարտաւորութիւնները, այլ ընդհակառակը աշխատում էր ազատուել նորանից այն միջոցով, որը ներկայանում էր ամենից հասարակ և հաստատուն, այն է՝ բոլորովին ոչնչացնելու այն ժողովուրդը, որոնց համար պէտք է լինէին խստացած բարենորոգութիւնները: Հայերի արդարացի պահանջներին և գանգտառներին տաճիկ կառավարութիւնը պատասխանում էր խաղաղ ժողովրդի արիւնալից սպահդանոցներով, այն սպանդանոցներով, որոնք հարկադրեցին Գլադիատորնին իւր իսկ քաղաքական կեանքից հեռանալուց յետոյ, մահուան շէմքում կրակու և զայրացած բողոք բարձրացնել ընդդէմ «մեծ մարդասպանի»:

Տաճկական յեղափոխութիւնը սկզբում հայերի առաջ

լաւ ապագայի յոյսեր բաց արաւ. Տաճկաստանի միւս ազգութիւններից աչքի ընկնելով՝ նորա մօտեցան երիտասարդ թուրքերին և փորձում էին ձեռք ձեռքի տուած ընթանալ նոցա հետ, բայց շուտով վերանորոգուած ջարդերը (Աղանայում) համոզեցին նրանց տեսանելի կերպով, որ նոր բեժիմը շատ մօտիկ ներքին կապակցութեան մէջ է գտնւում հնի հետ:

Բալկանեան պատերազմն էլ հայերին ազատութիւն չբերաւ, բայց, տեսանելի կերպով ցոյց տալով տաճկաց պետութեան աւերումն և նորա վերանորոգման անյաջողութիւնը՝ վերստին եւրոպական պետութիւնների ուշադրութիւնը գրաւեց հայ ժողովրդի վիճակի վրայ: Ամենաշատ գործնական մասնակցութիւնը դէպի նորա դրութիւնը ցոյց տուեց Ռուսաստանը, ունենալով ծրագիր վարչական առանձնացումն Հայաստանի՝ քրիստոնեայ նահանգապատիկ կառավարութեան ներքոյ, որը կընշանակուի պետութիւնների համաձայնութեամբ, իսկ այդ ծրագիրը հակառակութեան հանդիպեց Գերմանիայի կողմից և վերջինիս ջանքերով էականապէս ծուատուեց և աղճատուեց և վերջն ի վերջոյ գարձաւ մի ծրագիր, որով պէտք է ստեղծուէր երկու հայ-մահմեդական նահանգ երկու «գլխաւոր տեսուչներով» և եւրոպական «խորհրդականների» գլխաւորութեամբ: Բայց այդ ծրագիրն էլ, որը այսպէս թէ այնպէս խոստանում էր հայերին մի քանի, թէ շատ համեստ, բարելաւումներ նրանց դրութեան, մեծ եւրոպական պատերազմի սկզբից անցաւ անիրականալի երկակայութիւնների շրջանը:

Այժմ, երբ գերմանական-տաճկական դաւաճանօրէն յարձակումն մեր ափերի վրայ պարտաւորեցնում է անհրաժեշտաբար սրով մերձաւոր արեւելքի գորդեան հանգոյցը կտրել՝ հայկական հարցը իւր արմատական վճռահատման ֆազիսի մէջ է մտնում: Տաճկաստանի հայերի համար առաջ է գալիս նոր կեանքի արշալոյսը: Պատերազմը աւետում է նրանց ազատութիւն իրենց վրայ ծանրացած բըռնակալ և միևնոյն ժամանակ անիշխանական բեժիմից և

միացումն իրենց ցեղակիցների հետ:

Հայկական ազգային ձգտումների և Ռուսաստանի արտաքին-քաղաքական շահերի մէջ եղած նեղ կապակցութիւնը է պատմական փաստ, որ երկու գար շարունակ փորձուած և վերաստուգութիւնը է ենթարկուած։ Դժբախտաբար այդ փաստը ոչ ամեն ժամանակ գնահատուած է իւր ամբողջ նշանակութեամբ։ Եղել են բոլէներ, երբ ի վնաս պետական շահերի մոռացուել և առ ոչինչ է համարուել Հայաստանի գերը մեր առաջաւոր դիրքերում Տաճկաստանի հետ ունեցած դարաւոր կուռում։ Այժմ այդ գերը նկատում է բոլորի աշքի առաջ չեղած պայծառութեամբ և տեսանելի կերպով։ Եւրոպայում և Ասիայում կան շատ ժողովուրդներ, որոնք մինչև իրենց արիւնը շահագրգռուած են հետզհետէ աւելի վառուող համաշխարհային կոռուի ելքով, բայց հազիւ թէ գանուի ժողովուրդ, որի համար այդ ելքը լինէր նոյն չափով կեանքի և մահու հարց, ինչպէս հայերի համար։ Ռուսաստանի յաղթութիւնը պէտք է բերի տաճկահայերի համար ազատութիւն ոչ միայն տաժանելի լծից, ոչ միայն ազգութեան քայքայումից, այլ և արմատախիլ լինելուց այս խօսքի բառացի և ֆիզիքական մտքով։ Եւ իսկապէս հասկանալի է այն թափն ոգերութիւն, որով բռնուեցին հայերը պատերազմի առաջին լուրը լսելուն պէս, հասկանալի է, թէ ինչու հայ երիտասարդութիւնը, չսպասելով կոչի՝ շտապում է հրացանը ձեռքին կանգնել ուսւական դրօշակի ներքոյ։ Իսկ միւս կողմից Տաճկական Հայաստանում արդէն սկսուել է հալածանքը քրիստոնեայ ժողովրդի դէմ։ Անցնելով Անդրկովկասի սահմանը, մեր գորքերը մտնում են ոչ թէ թշնամիների երկիրը, այլ թշնամիների կողմից ճնշուած բարեկամների։ Թող կատարուի մինչև վերջը պատմական ուխտը, արտայայտուած հարիւր տարի սրանից տռաջ։ Թող չհեռացուի Ռուսաստանի պաշտպանութիւնից այն ժողովուրդը՝ որը դիմում է նորան։

թարգմ. Բաբեկն վարդապետ